

БИБЛIOГРaФИЧESKИЙ

Главнаго Управления

по деламъ печати.

Ма



Инглaзскaя Suзкaнижкa Элкбeнкa

С. ФРШЧ



ПЕЧАТЬ ОФИЦИАЛЬНАЯ

САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО АДМИНИСТРАТИВНОГО

1909

891. 99

Зи - 67

93

891.99  
3n - 67

## ԱՐԵՎԱՏԻ ԻՆՉԵՐԱԾ

PS NOV 2011



U. S. G. P. B.



ԱՐԵՎՈՆԴԱՐԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ ՍՊՆՈՅԵԱՆՑԻ

1909

09.07.2013

45424



59456-66

t f q t f

ԹՐԱՎԻԱԿԱՆ

Խաւար զիշերներ լալիս, ճեկիկում,  
Յերեկներ անխօս, փակւած ու անլոյս,  
Խղճուկ թոշնակս, երկաթ վանդակում  
Տառապում ես զու մենակ ու անյոյս:



Պ. Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆԻՆ

Սառ մոռացութեան հէքեաթ աշխարհից  
Երազի թեով թռչել են օրեր  
Շւաքի նման անմարմին, երեր...

Աննիւթ շրջեսկ դժգոյն մտորման  
Գունատ դաշտերում,  
Երազի միջին ցաւի ու անկման  
Ողբն էի լսում...

Ու զարթնում եմ մերթ աննիւթ երազից,  
Տեսնում եմ կեանքիս բեռը աղերեկ,  
Անեզր վիշտս տառապանք ծովում  
Շրջմոլում անդիկ ..

1909 թ. 18—VII.  
Աղեքսանդրապու-

ԿՐԴԱՅ ԳԱՐԱՒԻՆ...

Կըգայ զարուն խառ շորերով,  
Խառ շորերը փայլ կուտան,  
Նախշուն հաւքեր վառ երգերով  
Մար ու ձորին ձէն կուտան,

Ու հաւքերի ձէնը անուշ  
Կընկնէ սիրտս, կըթնդայ,—

Վեր կաց, ախպէր, գարուն եկաւ,  
Տես, զարունդ ետ կուգայ:

Խորը քնից ես կըգարթնիմ,  
Մար դարգերս շուռ կուտամ,  
Սէր-երգերի քնարս առած  
Գարուն եարիս տես կերթամ:

Ոտքերիս տակ վարդ, ծաղիկներ  
Կըշողշողան, ըոյլ կուտան,  
Լերկ անապատ, սկ, սկ ժայռեր  
Քաղցր ու անուշ կըժպատան:

Ու թէ կառնեմ, ու կըթոչեմ  
Արտ ու ափով, արօտով,  
Ու կըայրւեմ, ու կը խնդամ  
Գարուն եարիս կարօտով:

\* \*

Եկաւ գարուն, վարդ ու ծաղկունք  
Սիրոյ ձէնով երգեցին,  
Կորած գարուն սէրը յիշեց,  
Ու հառաչեց իմ հոգին...

Եկաւ աշուն, ծառ ու ծաղկունք  
Սուգի ձէնով երգեցին,

Յաւը յիշեց ու նրանց հետ  
Խոր հառաշեց իմ հոգին...

Ս է Բ Ս

Մ-ին.

Գուրգուրանքով հեղաքնքուշ,  
Ժպիտներով գարնայնի,  
Մերթ պատմում է նա մինչև լոյս  
Հէքեաթները Եղեմի:

Մերթ անհետում շունչը ներա  
Ու գիշերներ՝ սկզ, անյոյս,  
Ծանրանում են սրտիս վերայ  
Մինչ լուսածին արշալոյս:

Մի ցնորք է եթերային,—  
Պատրանքների մարմնացում,  
Ա՛խ, տանջանք է մի անմարմին—  
Խոր ցաւերի դառանցում:

1909 թ. 24—ՎԼ Վաղարշապատ.

\* \*

Իջնում է խաղաղ անխօս իրիկուն,  
Ծաւալում գետնին ծածկոցը մութի,  
Վայրի ափերին յոզնած ու նիւհուն  
Մեղմ օրօրւեցին ոստերը վարդի:

Երջում եմ մոլար անէութեան մէջ,—  
Վայրի ափերում—նիրհուն, քնարից,  
Եւ ցաւ, և տենչեր անում են ինձ մէջ,  
Թաղած երազներ ապրում եմ նորից...

Մ Ե Ն Ս Ի Ո Ր Շ Ե Ր Ի Մ

Կամարովն երկնի երկու ամպ աղւոր  
Լողում են կայտառ, ուրախ, բերկրալից,  
Ներքեց մէկ հատ շիրիմ մենաւոր  
Ընկած է խաբւոծ, սիրուց աշխարհից...

Երգում է թոչնակ անդորր, անվրդով  
Ու զոյգ ամպիկներ փարւում են իրար,  
Ամպերի ներքի կնճոռոտ խորհրդով  
Մենաւոր շիրիմ թախծում է մոայլ...

\* \*

Շուրջու զարուն ծաղիկներով,  
Դարնան ծաղիկ համ ունես,  
Երնէկ բոյիդ, մարալ աղջիկ,  
Ոսկու նման ծամ ունես:

Գարուն բերաւ ինձ սուգ ու լաց,  
Դու անհոգ ես, անլաց ես,  
Երնէկ քեզի, մարալ աղջիկ,  
Վարդի նման կըբացւես:

Զմրուխտ ալիք ափ կըզարնէ  
Առաւօտից մինչ իրկուն,  
Ուռիների հովը կըզայտ  
Դու կըմտնես անզորը քուն:

ՄԻՌ ՀԱՐՑՐՈՒԻ.... (ԱՂԱՍՈՒՄ)

Դալար արցունքներ  
Մրտումս քարացած,  
Մի հարցըրու, ընկել,  
Ինչու եմ հանդած:

Դառնազի վշակը  
Թող սիրտս կրծեն,  
Թէ ցաւս ինչ է,  
Մի հարցըրու ինձէն:

Ինչու մութ թախիծ  
Նստեց իմ հոգում,  
Մարեց իմ սրտում  
Սիրոյ բանկում,  
Ինչու հմ ատում  
Եւ սէրն, և մարդուն,  
Փախչում ամենքից,—  
Աշ, հանգիստ թող ինձ...

ԱՇՆԱՆ ԵԲԳԵՐԻՑ

Գեղատես զարնան զարդերը թոշնան,  
Դաշտն է մենացած, ամայի ու լերկ,  
Լեռներից իջան քամիներ գումկան,  
Մեռնող բնութեան երգում են ողբերգ:

Մերկ ու գլխիկոր թախծում է անտառ,  
Գարնան պերձութեան օրերը յիշում,  
Զոր տերմեները ցրիւ, հողմանար,  
Տիուր, ամայի դաշտերն են շրջում:

Ու լաց են լինում քամիներ գուժկան,  
Մոայլ ժայսերի կուրծքերը ծեծում,  
Ինձպէս մենաւոր ու թափառական,  
Ինձպէս ցաւերի մրմունջով հեծում...

\* \*

Հեռու, հմայիչ հորիզոններում  
Վարդագունում է սիրուս արշալոյս,  
Եւ ես դիւթական վառ երազներում  
Լուսեղին պատկերն անսում եմ սիրոյս:  
  
Ու խորն անձկութեամբ նետում եմ առաջ  
Փարելու շքեղ վարսերը նրա,  
Ու չըխոնարհուղ ճակառվս անհաշտ  
Ընկնել ու գրկել ոտքերը նրաւ

Հեռու, հմայիչ հորիզոններում  
Մերթ ժպտում է նա դէմքով լուսաշաղ,  
Անձուկ կարօտով կուռ կապանքներում  
Տենչում եմ նրա պատկերը չքնաղ...

\* \*

Երբ կըշողշողայ ցօվը վաղորդեան  
Ծիծաղկոա գարնան վառ արշալումին,  
Ու կըդեղեղին երգերով համայն  
Երկնի սիրունիկ հաւքերն միասին,  
Կըժպտայ մեղմիկ արեւ պայծառ,  
Ու ծիածանը կըկապէ կամար,

Երբ սար ու ձորը թաւիչներ ուսին,  
Անխօս, ունկընդիր բազմած կող-կողքի,  
Կըլսեն երգեր աչաղեղ կուսին,—  
Երգերը սիրոյ, վշտի, արցունքի,—  
Աշխ, սիրաս, սիրսա ցաւով կըլցի,  
Սմեն մի լարից մի ձայն կըլսի...

• Գարուն է փայլում  
Քու սիրուն դէմքին,  
Թող տես գամ, փարւեմ  
Քու գարուն դէմքին:

Մով մանուշակ են  
Քու ծով աչերդ,  
Մի ծածկիր ինձէն  
Քու շող աչերդ:

Ոսկի հուսկերդ  
Վարդի բոյը ունի,  
Թռղ գրկեմ, զգւեմ  
Հուսկերդ Մանի:

Կ Ո Բ Ա Ծ Ե Բ Գ Ե Բ Ի Ց

Էն թնչ դարդ էր, ախ, ընկեր ջան,  
Որին դարման չըգտար,  
Գիշերն եկաւ, մութը պատեց,  
Ու դարդիդ հետ քուն մտար:

Դեռ գիշեր է, ու քուն կեղնիս,  
Ա՛խ, երբ կըգայ առաւօտ,  
Որ դու խորը քնից ելնիս,  
Գարուն երգես վարդահոտ:

Ուռիները, մի լալիս են  
Գետի ափին, լճի մօտ,  
Վեր, ընկեր ջան, կեանքն է սառել,  
Գարուն երգէ վարդահոտ:

Սիրած Մի՛ ԲԱՆԱՐ...

Սիրտդ մի՛ բանար, մի՛ խօսիր դարդից,  
Ծաղրով կընայեն քո լաց ու կոծին.  
Նենդ օձ է մարդը, ու դու մւր կերթաս  
Միրտդ բանարու նենդամիտ օձին:

Սիրտդ մի՛ բանար նենդամիտներին,—  
Մաշուկ թոյներով կեանքդ կըհիւծին.  
Փախիր նրանցից, բայց երբ հանդիպես,  
Բոնիր ու խեղդիր մարդուն անօրէն:

Սիրտդ մի՛ բանար, մի՛ խօսիր դարդից,—  
Սըտանց կըխնդան քո լաց ու կոծին.  
Սարերը քաշւիր, հեռացիր մարդից,—  
Ու լաց, սիրտդ բայց սարին ու քարին:

\* \*

Սիրոյ ցնորդդ կանցկենայ ուշ վաղ՝  
Առանց բռնելու, առանց յիտ գալու,—  
Խելայեղ տարիքդ կը անցնին, աւաղ,  
Առանց ցնորքդ ուրիշին տալու:

Ուրիշի սիրուն հալ ու մաշ եղար,  
Մարդիկ չիմացան վեհ սէրը ինչ էր,

Տարիքդ կանցնին ու չեն իմանար  
Խելայեղ սրտիդ ցնորքը ինչ էր...

\* \*

Աննման ակջիկ, գեռահաս վարդ ես,  
Խաս թերթերունքդ շուտով կըբացւին,—  
Վառ վարուն կըգայ ու դուն կըծաղկես,  
Համդ ու հոտդ աշխարհ կըլցւին:

Երբ ծագէ մատազ արևը գարնան,—  
Քեզ դաշտ, դալարիք կըբերեն ողջոյն,  
Ու դու կըժպտաս արեռունման,  
Կըբանաս արև աչերդ նախշուն:

Երբ երկրում լինի խորշակ, փոթորիկ,—  
Կեանքս կըդնեմ, կըպաշտպանեմ քեզ,  
Որ չը թոռոմին թերթերդ գողարիկ,  
Որ դու անվաս, անարատ ծաղկես...

### ԸՆԿԵՐ ՎԱԶԳԻՆԻՆ

Հասիր քո երը սրտիցդ անյոյս.—  
Այդ խնըթ, ապօրէն զաւակն աշխարհին  
Ու, խստակեան.

Ցամքեցան յոյզերդ ծաղկաւէտ գարնան  
Անապատ սարի լերկ ժայռերի պէս.

Զուր մի մորմոքիր, էլ ուրիշ դարման  
Խորին վէրքերիդ դու գտնելու չես:  
Մոռացիր ժպիտ խարդախ աղջըկայ,  
Նենգ ընկերների խաղեր ու գաւեր,  
Ու քանի սրտումդ սրբազան հուր կայ,  
Կեանքի ճահիճից ձգտէ դէպի վեր...

Ու վեն խոհերդ մի մահւան մատնիր,  
Գնա թափառիր աշխարհներ հեռու,  
Մի սուրբ արցունքդ զուր տեղը վատնիր,  
Այլ կուիր, տանջւիր փոխանակ լալու...

\* \*

Երբ վսեմ կայծով հոգիդ բռնկւի,  
Եւ կեանք կըմտնես պատգամով վերէն,—  
Քեզ կըհալածէ, հիւթդ կըծծէ  
Շւայդ ու մոլի ամբոխը նորէն.  
Ու օձից խայթւած՝ քաշւիր, հեռացիր,  
Մի դառնար կըկին դէպ մարդն անօրէն.

### Օ Ր. Լ - Ի Ն

Քարասիրտ օրում, երբ անդառնաւի  
Հնկած է մարդոց հոգու վեհութիւն,  
Մի կայծիր սրտումս, աղջիկ նազելի,  
Վասվըռուն դէմքիդ կարօտը անհուն:

Կեանքիս գալունքին, մի վաղուց անտուն,  
Մարդոց հայեցքից հեռու ու օտար,  
եւ զօր, և գիշեր կարօտով անհուն  
Լացիւ եմ այս կեանք, զրկել եմ ժէռ քար:

Հիմա էլ քնյը իմ, լքւած, յուսահատ,  
Մարդոց հասցըրած վէրքերով խորին  
Փախչում եմ կեանքից հեռու անապատ  
Դարդս բանալու ժէռուտ քարերին:

## Պ Ա Տ Կ Ե Բ

(Բարսի Հայ-Թուրքական թիգիսարման սպառութիւնից)

Մշուշ էր պատէ թղպոտ երկնքին,  
Մթնած երկիրը դառն կըսգար,  
Կեանքս էլ խողալիք չար բաղդի ձեռքին  
Ցաւի բեռան տակ ծանր կըտնքար:

Ողբ ու սուգ կուգար հեռուն տեղերից,  
Վաղձանն էր, կարծիս, հանուր աշխարհ,  
Փախչում էր թոյլը ուժեղի ձեռից,  
Ուժեղը թոյլին վանում էր զերի:

Եկողն ընկածին հալւած էր տալիս,—  
Գաղան էր արբշիս մարդը իմ աչքին,  
Ցամքել էր յոյզու, էլ չէի լալիս,  
Էլ չէր մտորում իմ անյագ հոգին...

\* \*

Դիշել, ցերեկ, օր ու տարիք քու կարօտը  
Քու կարօտով, չքնար աղջիկ, օր ու արե  
մաշեցի.  
Վարդի նման վառ այտերդ կարմիր բոսոր  
կապեցին,—  
Գարունդ եկաւ, վարդ այտերդ բացւեցան  
ու բուրեցին...

Հալածական ամպի նման՝ թափառական,  
անկայան,  
Քեզնից հեռու, քեզնից օտար՝ խոր ցւեհ-  
րը ինձ առան,  
Հեռուններից թիկը առայ, քեզի եկայ զօր,  
Չիշեր,  
Զոհ բերելով քեզ կեանք, արե, ծովերու չափ  
անհուն սէր...

Դու քար դարձար, անուշ աղջիկ, ժէռ քա-  
րերին ինձ խփիր.  
Ու ման կըդամ աւեր սրտով հիմտ երկըրէ  
երկիր:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԹԾԻՒՆԵՐ.**

**ՕՐԻ ՄԵԴԻՆ.**

Խաս վարդի նման, կուտած պար,

Հաղած կարմիր կաս,

Եղիկի նման, կուտած պար,

Հանգեր ման կուգաս.

Կաքաւի նման

Տօրօթներ կուտած,

Քայլէ եար ասհմ,

Զէյրան եարօ ջան:

Թռւ սիրու ձեռքից,

Եղած վիրաւոր,

Թառ բուլիդ յետքից,

Ընկած սար ու ձոր.

Կարօտ սնորակ

Աչերիդ աղւոր,

Կայնէ եար ասհմ,

Զէյրան եարօ ջան:

Ալ վարդի վրայ

Բունում է սուր փուշ,

Վարդիդ տանջանքը

Թառն է ու անուշ.

Ա՛խ, սիրած վարդը

Կը խլէ ուրիշ,

Այս է չար բազդը

Շողիկ եարօ ջան:

\* \*

Հեռացած եար ջան,

Մոռացած եար ջան,

Նստենք ու խօսանք:

Վարդոտ գարնան պէս

Անուշ բուրեցիր,

Մի կրակ եղար

Միրտս էրեցիր:

Թէ չէիր առնում

Բնչնւ խարեցիր,

Ուխտազանց եար ջան:

Նստենք ու խօսանք:

Օրերու երկար

Տարիներ դառան,

Ձեռներս ծոցիս,

Աչքս ձեր դռան,

Բնչպէս դու եարիդ

Արիր մտահան,

Քարասիրտ եար ջան,

Նստենք ու խօսանք:

Ի

## ՄԻ ՊԱՏԱՆՈՒ

## ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

(ՀԳԻԼԼԻԱ)

## I

Գարուն էր Արագածի երփներանգ գէշեն բին. ասեղնածալը թաւ սէզը զրկախառնը ւել էր թաւշեայ փափուկ կանաչի հետ, պատել էր ոլորուն հովիտները, հարթալանջ րլուրները: Հսկայածաւալ խայտարգէտ մի գորգ էր, կարծես, որ ծածկում էր բիւրաւոր ծալքերով հորիդոնները ձգւող շրջականները: Անհոգ զեփիւար, օրն ի բուն, մտորմունքի ուրաւականի նման անյօյզ ունկընզրելով կեանքի հեծձկլատանքին, — շրջմում էր լայնածիր այդ գորգի վրայ: Հեղահամբոյը արեի շողերի տակ վեր-վար էին ցատկում մատաղ գառն ու, ուրերը, կայտում, հրճում էին Արագածի գունադեղ գարունքով:

Ես ու Շողիկը գառնարածներ էինք: Զինջ, անմեղ երազանքի օրերն էին, և մենք երկուսս էլ մտասոյզ մանուկներ էինք: Ամեն ինչ դիւթական էր, հրաշքներով լի, հեքեաթների մի շքէզ, վիպական աշխարհ... թէ ինչ ցնորքներ էին նրանք, — ես չեմ յիշում հիմա պարզ և ոչ մի բան, բայց գիտեմ, որ ամենքը պատմում էին մի ինչ որ գերբնական աշխարհի, անհաս էակների

անմատչելի գոյութիւնների մասին, որոնց շուրջը սաւասնում էր իմ մանկական հոգին և ձգտում էր ու մտորում...

Շողիկը տւելի կայտառ էր ինձանից: Սեորակ աչքերը մերթ յառում էր նա մօտակայ կանաչի տուղ առւելլրին, եղնիկի նման սատնում էր այստեղ, մեկնում երեսն ի վար զէսի առւակի վճիռ չուըը ու նայում ակնապիշ ցած խոխոջող հոսանքին: Սյու ժամանակ ճոխ սե հուսկերը ծածկում էին ամբողջովին նրա վայելչակազմ վաքրիկ թիկունքը: Հարբած զարունքւայ կինսաշունչ բոյրով, նու յանկարծ վեր էր թըռչում, անակընկալի հանգիպած եղջերսի նըման չքնաղ սեորակ աչքերը կանաչազեօտ շրջակայքին ուղղում ու գեղգեղսւն ձայնով երգեր էր կանչում...

Գեղջկունու լացի ու ծիծաղի, մորմոքի ու թախիծի ելեէջները սիրոյ Փռնի վրայ ոգի առած մեղմ ալիքներով սահում էին օդի մէջ և բեկրեկում մօտակայ ձորակի ժայռէ ճակատին... Վերանում էր իմ մանուկ հոգին, անորոշ տեհնչանք ու թախիծ ընդգրկում, օրօրում էին ինձ...

Իջնում էր կամաց-կամաց Շողիկի ոգեռութիւն թափը, որի հետ և էլ հետք-

հետէ զարթնում էր մանկական պօէդիայի  
հրապուրէչ ցնորքներից...

Երգում էր Շողիկը վերջին երգը. Նրա-  
նով վերջանում էր և իմ մտորումների աշ-  
խարհը, ու ապագայի սառն, ցաւոս յուշե-  
րը ապրել էր սկսում հս:

Այս էր նրա վերջին երգը.

Հեռու երս ջահել է,  
Սաւդէն իրեն տարել է,  
Ա՛խ, էս աւեր աշխարհը.  
Մեզ անմուրազ արել է:

Դա սրտի խորքում հեկեկող յոյզերի ե-  
ղերերգերից մէկն էր, որը նման մելա-  
մաղձիկ ելեւչներ անելով տպաւորութիւն-  
ները կաղում էր իրար, որպէսզի յափեշ-  
տակւող ականջը ուրիշ կողմ չըգտնայ:

Կանգնած հարթալանջ բլուրի կուրծքը  
վարարող առւակի կանաչ եղբին, շքեղ թի-  
կունքը բարակ գոտեկապից սկսած օրօրում  
էր նա այս վերջին ելչգիան երգելիս:

Մի փոքրիկ հրեշտակ, մի ողմերգակ  
մարգարէռնի էր այդ բապէին բարձունքում  
կանգնած Շողիկը, որի շրթունքից ցայտում  
էր դարաւոր հեծելուցող բողոքը տառա-  
պած սերնդի:

Նրա կրակոտ աչքունքի շողքը նսկան-  
նում էր այդ վայրկեանին, երեսի բոլորա-

ւուն կարմրի սահմանը կորչում շուշանա-  
գոյն սպիտակի մէջ, ու բոսոր ալիքները  
խաղում էին նրա գեղանկար այտերին...

Դիւրալից յոգնածութիւնը շոյում էր իմ  
կուրծքը այդ ժամանակ. թւում էր, թէ մեր  
մանկութիւնն եկած-անցած է արգէն, ան-  
յուսութեան վայրկեանը հասել է, և ինձ ու  
Շողիկին աւեր աշխարհը անմուրազ բաժա-  
նել է իրարից:

Անցնում էին ժամեր, բայց երկուսս էլ,  
այս էլէգիայից յնտոյ, գլխակոր էինք ու  
անխօս,—պօէզիայի սահմաններից իջած...  
Ինձ թւում էր, թէ մենք լոիկ հասկանում  
ենք իրար...

Իջնում էր արել դէպի հարթավայրը ե-  
ղերող բլուրները և մեծ-մեծ աշտանակները  
բոցավառում էին նրանց գագաթներին:  
Հրաշալի էին նրանք, երազական, և մենք  
լուս ու անհաղորդ նայում էինք կախարդա-  
կան այն բոցերին...

Գտնն ու ուշերը կայտառ ոստիւններով  
կանաչագոտի բլուրներից գիւղն ի վար է-  
ին թոչկոտում, սուրում էր մեղմահամրոյը  
հովիկը,—կանաչները զուրգուրում: Զնգում  
էր նորից Շողիկի գեղգեղուն երգը և մե-  
նացնող խոհերը ցրւում մեղանից...

## Ա Ա

Անցել էին տարիներ, և ես ու Շողիկը գես գառնարածներ էինք: Վազ մանկութեան հրաշտիքներն նսեմացել էին կամաց-կամաց և տեղի տւել գաղտնի ու տանջող զգացումների, որոնք մենք ապրել էինք Արագածի գունազեղ գարունքւայ դրկի մէջ — թուշէ-պատ հովիտներում, կանաչազգեստ բլուրներում: Շողիկի սիրաչին երգերը պատմել էին մեզ այն գաղտնիքները, ինչ փնթրում է պատանեկութեան շէմքին կանգնածը: Իմ 12-րդ տարին բոլորում էր արդէն, իսկ Շողիկը մէկ, կամ երկու տարով փօքր էր ինձանից, և մեղանից իւրաքանչիւրը ինսամքով սնուցանում էր իր սրտում այն զգացմունքը, ինչ սէր է կոչւում... Յերեկները լուռթիւնն էր հաղորդիչը մեր սրտերի, իսկ գիշերները՝ քաղցր տանջանքները, որ ապրում էինք մենք յուշերի ու երազների մէջ մինչև առաւօտ:

Սյապէս բոլորեց և այդ գարունը, երբ ես ու Շողիկը տանջւող, անլեզու զգացմունքներով բաժանեցինք մէկ-մէկուց...

~~~~~

Կալ ու կուտը սկսւում էր արդէն, երբ երես արևի բոցավառ գունդը, կարծես վաստակած, եղերում էր հորիզոնի հիտ,

հանդէս էին գալիս աշունքացող բնութեան խորհրդաւոր խաղերը:

Շըջմոլիկ զեփիւոը պտոյտի ելած՝ հէ-քեաթախօս աներեոյթ սրինգով հնչեցնում էր յոգնած լսելիքներին անդորրութեան երգը .. Բացւում էր աստեղազարդ երկնի փարթառ կուրծքը՝ գարաւորցնորքների ու Նոհատակութիւնների այդ խելաս պատահականութիւնը տիեզերական տառապալից ճանապարհին:

Թողւած հացարոյսերի հնձած չոր կոյտերի մէջ, նայում էի ժամերով երկնի բոցավառող կամարին... Տիրող անեսութեան մէջ լսւում էին մերթ-մերթ բարձրանչիւն երգեր, որոնց զօրեղ ալիքները տարւում էին զեփիւոի թեերով բարձր, բարձր և փաղաքշում, հմայում էին իմ էութիւնը... Լըսողութիւն կտրած, ականջ էի դնում երգերի այդ գայլայլումներին... Լսւում էր յաճախ և Շողիկի քնքուշ ու մելամազ մեղեղին, որ պատմում էր մեր մանկական երազանքներն, մեր գաղտնի զգացումներն...

~~~~~

Կալ ու կուտը կէս չէր եղած դեռ, երբ սկսւեցին չարաշշուկ ձայներ պտաւել զիւզում: Խօսում էին, թէ խօթեր է եկել և աներեոյթ կերպարանք առած շրջում է տնի-

թը ժամկոչ Մուխսու հետ, և թէ՛ Մուխսին  
զանազան մարդկանց մասին պատմել է, որ  
խօլերը խփել է նրանց իր ձեռքի դալար  
ձիպոտով, որոնք շուտով մեռնելու հն:

Ով հաւատում էր այս խօսքերին, զգում  
էր իր սրտում երկիւղ ու պատկառանք գէ-  
պի Մուխսին և մտածում էր՝ թէ ինչպէս  
սրտաշնել կարենայ նրան, քանի որ պատ-  
մում էին և այն, թէ խօլերը Մուխսու  
մտանացոյց արած մարդկանց է խփում...

Շուտով աղեշաբժ տեսարաններ սկսան  
կրկնել ամեն բոպէ: Խօլերը արդէն բուն  
էր դըել իւրաքանչիւր անկիւնում, և կա-  
պերտների մէջ փաթաթած գիտկներ տար-  
ուում էին շարունակ գերեզմանատուն, մեռ-  
նողների թիւը այնքան շատ էր, որ գագա-  
ղը ագատ չէր մնում և ամեն-մի տանից  
լուում էր ողը ու հեկեկոց:

Մեր կալը մի քանի սաժէն միայն հեռու  
էր գերեզմանացից, ամեն անգամ, երբ ող-  
րասաց ու ծեծկուղ թափորը գերեզմանա-  
փոսին էր մօտենում,—մեր տանեցիք «վայ-  
վույ» կանչելով յայտնում էին մէկ-մէկու,  
թէ այս-ինչին հն տանում թաղելու: Մեռ-  
նողները, մեծ մասամբ, զիւղի վայելչակազմ  
և քաջ աշխատաւոր երիտասարդներից էին:  
Սիրելիները թարմ հողաթումբը բոլորած

ժամերով ողբում, հեծեծում, ծեծկում էին  
իրանց և չին կամինում բաժանւել անմեղ,  
անլեզու հողակոյտից...

Զարագուշակ ու մտքերը պատել էին  
ինձ... Ահա մի տիշուր, սրտամաշ օր հա-  
մաճարտկին զոհ զնաց և իմ հայրը: Շատ  
թարմ յիշում եմ, որ այդ վայրկեանը ինձ  
սոսկալի թւաց: Իրականութիւնը այնուհե-  
տե մի մշուշտ, տիսուր զոյն առաւ իմ աչ-  
քում: Փոխւց ինձ համար և Շողիկը.—նա  
այնուհետեւ հեռու, օտար երեաց ինձ... և  
հա խորը զգում էի, որ մենակ եմ այլիս,  
որ առաջւայ փայփայանքի աեղ միմիայն  
մերթ-մերթ կարեկցութիւն եմ լսում ու-  
րիշներից, որը անչափ ծանր, խեղող է...  
Աւ հեռու... հեռու էի փախչում այդ կա-  
րեկցութիւնից, քանի որ այն իմ որբութեան  
ու խեղճութեան տիսուր պատմութիւնն էր  
անում. . Եղբայրներս ու քայրերս էլ էին  
զգում այդ ծանր իրականութիւնը,—ես նը-  
րանց գէմքերին կարգում էի այդ. իսկ  
իսկդ մայրս տառապում էր ամեն օր...

Երկու գաժան հօրեղբայր ունէի ես: Բո-  
լորում էին տարիներ, բայց նրանց երես-  
ներին երեք ժպիտ չէի նկատել, — նրանք  
շարունակ խոժոռ էին ու մռայլ: Այդ ամեն-  
նը, սակայն, ինձ չէին հետաքրքրում ու

մտատանջում, երբ կենդանի էր հայրս, երբ ուրախ էին մայրս, եղբայր ու քոյրերս, երբ խորթ չէր երեսում ինձ Շողիկը, և իրականութիւնը տիսուր, սրաւամաշ գոյն չէր առել իմ աշքում. — Հիմա ամեն ինչ փոխել էր, — ևս անօդնական ու մենակ որր էի տեսնում ինձ աշխարհի երեսին...

Շուտով տեսայ հօրեղբայրներիս երկաթէ բոռնցքները մօրս զլիի վրայ բարձրանալիս. նա լաց էր լինում, ցաւով լի հայտացը ուղղում էր ինձ, եղբայրներիս և քոյրերիս: Նրա հայեացքում կար միայն անեղու վիշտ և անզօրութիւն, որը աւելի զգացնել էր տալիս մեզ մեր խեղճութիւնը աշխարհի երեսին... Բայց այդ էլ երկար չըտեսց. հօրեղբայրներիս բոռնցքները աւելի սասակացան և անձար, բերնկապ մօրս սահպեցին երկրորդ ամուսնու դնալ:

Թէ ուր տարան նրան, — ևս այդ չ'կարեցայ սկզբում իմանալ: Զի նստեցնելիս նա լալիս էր աղիողորմ ձայնով և մի-առ-մի համբուրում ինձ, եղբայրներիս և քոյրերիս...

Երբ ամեն ինչ վերջացած էր, — մի կարճահասակ մարդ մօրս ձիու սանձը բանեց և յետեից ձիգ տեսց. ձին մի քանի անգամ գլուխը վեր-վար անելով, ակամայ հետեւց կարձահասակ մարդուն, և հեծեաների

խմբակը մօրս ձին մէջ աբած, գէպի սպիտակ բլրակը տանող ճանապարհ: բարձրացաւ: Ես զոռալով վազեցի մօրս յետեկից «ատէ ջան» կանչելով. հօրեղբայրներս ուղեցան երկաթէ ձեռքերով յետ պահել ինձ, և նոյն իսկ կատագած Յարութը խփելու պարագաստեց, բայց շվջապատողները աղաջանքներ անելով՝ թոյլ չուին նրանց դիզելու ինձ: Զայնի ամբողջ ուժով գոռոացի ես և առաջ նստեցի... Ինձ տեղաւորեցրին մօրս յետեսում՝ թամբից ցած:

Առմբը առաջ շարժւեց... Լսում էր երկար ժամանակ մեր յետքից ցաւակցական բառեր և հասանչներ...

Օտար, անծանօթ տեղերով երկու օր շարունակ առաջ էինք գնում՝ մերթ ցածրանալով ձորերի ու հովիտների մէջ, մերթ բարձրանալով բլուրների ու լեռների վրայ...

Երագածի փարթամ գարունքի օրերից էին: Շուրջը շոշշողում էին ծաղկալառ դաշտեր, հազարաւոր բարձունքներից հակայ ժայռերի հետ կոխւ անելով ցած էին խոխոջում վճիտ, փրփրադէզ աղքերակներ. շղթայալտոյալ լեռների հեռաւոր ծէրպերից թափիծի ոլորտներով ցածանում էին գեղջկուհու անհուն մօրմոքները, ու ծիծաղկուն

սար ու ձորը լցնում նրանցով...

Ճաւերգերի մութ հնչնախաղերը անտփ  
հեռուներից էին մըմիջում ու հազարաւոր  
տարիների արգելանոցի յետև հեծկլացող  
ներվիրը քաշում, բերում էին անլայտու-  
թիւնների միջից կ'ախծանքի, անլուր կա-  
րօտի մշուշոտ ու անծայր պատմութիւն-  
ներ... Իսկ Արագածի կինսուրախ ողին  
ժպտում էր, և կարծես չէր կարողանում  
տանել զարերի խորքերից հնչող այդ ոլո-  
րուն թախիծները, ու կուռմ, անհաշտ  
կուռմ էր նրանց հետ... Մտորուն յուշե-  
րով ննջում էի ես անորոշ երազների գըր-  
կում... Լուռում էր մերթ-մերթ իմ և Շողի-  
կի սիրած էլէզիան՝

Հեռու եարս ջահել է,  
Սաւզէն իրեն տարել է.  
Ա'խ, էս աւեր աշխարհը  
Մեզ անմուրազ արել է:

Մարգարէութիւնը շատ վաղ էր կատար-  
ւած... Աւեր աշխարհը ինձ ու Շողիկին  
անմուրազ բաժանել էր իրարից ընդմիշտ...  
Ու երդը շատ ցաւոտ, շատ քաղցր հնչում  
էր իմ ականջին...



ՀՀ Ազգային գրադարան



NL0353026

45427

501

501

501

45427 10 409.